

ԱՄԱՆՈՐ

ԱՄԱՆՈՐ նշանակում է Նոր տարի, կոչվում է նաև Կաղանդ կամ Տարեմուտ: Նոր տարվա տոնածառը խորհրդանշում է Կենսաց ծառը, իսկ տոնածառի գագաթը զարդարող աստղը մանուկ Հիսուսի ծնունդն ավետող Բեթղեհեմյան պայծառ աստղը: Նոր տարին նաև հոգևոր նորոգման խորհուրդ ունի:

ՃՐԳԱԼՈՒԹՅՈՒՆ նշանակում է ճրագ, մոմ լուցանել, վառել: Ճրագալույցի արարողությունը կատարվում է Սուրբ Օննոյան և Սուրբ Հարություն տոների նախորդ օրերին երեկոյան: Հավատացյալները մասնակցում են Սուրբ Պատարագին, ապա վառվող մոմեր են տանում իրենց տներն օրհնությամբ լցնելու:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, պահպանելով հնավանդ սովորությունը, Հիսուսի Օննոյան և Մկրտության տոնը կատարում է նույն օրը հունվարի 6-ին, իսկ Նախատոնակը հունվարի 5-ի երեկոյան:

Հիսուսի Օննոյը հավատացյալներն այսպես են միմյանց ավետում.

«Քրիստոս ծնվեց էլ հայտնվեց: Օրհնյալ է հայտնությունը քրիստոսի: Չեզ էլ մեզ մեծ ավետիս»:

ՋՐՕՐՀՆԵՔԸ ջրի օրհնության արարողություն է: Այն կատարվում է հունվարի 6-ին Հիսուս Քրիստոսի Օննոյան և Մկրտության տոնին Սուրբ Պատարագից հետո, և խորհրդանշում է Հիսուսի մկրտությունը Հորդանան գետում: Հոգևորականն աղոթքներով, շարականների երգեցողությամբ, Ավետարանով, խաչով և սրբալույս մուռնով ջուրն օրհնում է: Օրհնված ջուրը բաժանվում է հավատացյալ ժողովրդին:

ԱՅՍՊԵՆ ԵՎ ԵՄԵՐՍՈՒՄԻ ՍՈՐԵ ԾՆԵՂՆԵՐ ՄԵԾ ԱՍԼ ԱՅՈՐԻ ՍՈՐԵ ԱՍՏՎԱԾՍԻՆ ԵՆԵՂՆԵՐՈՒ

«Քրիստոս ծնվեց էլ հայտնվեց: Օրհնյալ է Հայտնությունը Քրիստոսի: Չեզ էլ մեզ մեծ ավետիս»:

Ահա այս խոսքերով սկսեցին ու ավարտեցին տոնական միջոցառումը Սուրբ Աստվածածին Եկեղեցու կիրակնօրյա դպրոցի սաները, որոնք արդեն երկու տարի Սուրբ Օննոյան տոնական հանդեսով իրենց շուրջն են հավաքում հավատացյալ հան-



դիսատեսին: Անշուշտ շատ տպավորիչ էր ու խորհրդավոր, երբ 7-8 տարեկան երեխաներն իրենց դերախաղերով, որը հնչում էր մայրենիով, հաղորդակից եղան Աստվածաշնչյան պատմությանը կապված Հիսուս Քրիստոսի ծննդյան հետ: Ներկայացումը Ավետարանների պատմությունն էր, թե ինչպես Հրեաստանի Բեթղեհեմ քաղաքում, որը նշանակում է «հացի տուն», ծնվեց Հիսուսը: Մանկան անառջին այցելել են հովիվները հրեշտակներից իմանալով բարի լուրը: Իսկ Հիսուսի ծնունդն ավետող Բեթղեհեմյան աստղը նրա մոտ է ուղեկցել Արևելքի երեք արքաների:

Միջոցառումը ողջունեց Սուրբ Աստվածածին Եկեղեցու հոգևոր հովիվ քահանա Տեր Աշոտ Լազարյանը, ով այս տարին ևս երեխաների համար նվերներ էր պատրաստել: Օրվա կարևոր խորհրդով, քահանայի սուրբ օրհնությամբ երեխաներն իրենց տները տարան Աստծո օրհնությունը, սերն ու պատգամները:

Անահիտ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ուսուցչուհի

ԵՐՆԵՎ ԹԵ ԱՅՍ ՆՈՐ ՏԱՐԻՆ ...

(ԱՅՍՊԵՆ ԵՎ ԵՄԵՐՍՈՒՄԻ ԱՄԱՆՈՐԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ)

Աշխարհի որ կետում էլ լինենք մենք՝ հայերս, Ամանորին պատրաստվում ենք շատ մանրակրկիտ հավատարիմ մնալով դարերից եկող մեր ավանդույթներին, ավանդույթներին:

Այս անգամ ՀԲԸՄ հայկական վիրտուալ համայնքի հետ կազմակերպված դասմիջոցառումը նվիրված էր սիրված ու սպասված տոնին Ամանորին: Միջոցառումը կազմակերպվել էր Դոնի Ռոստովի հայ համայնքին կից գործող հայոց լեզվի և հայոց պատմության «Մաշտոց» խմբակի աշակերտների ջանքերով: Հայկական վիրտուալ համայնքի կից գործող հայոց լեզվի և հայոց պատմության «Մաշտոց» խմբակի աշակերտները շրջանակներում երեխաները հնարավորություն ունեն ոչ միայն հայերեն սովորել, այլ նաև ծանոթանալ հայոց պատմությանը, մշակույթին, ավանդույթներին:

Համայնքի հեռավար դասախոս Գոհար Գևորգյանը սկսելով միացավ միջոցառմանը և ուշագրավ տեղեկություններով լրացրեց դասը:

Նավասարդ, Տարեմուտ, Տարեգույն, Կաղանդ, Ամանոր, Նոր տարի: Դարեր շարունակ ձգվող իր պատմությանը ընթացքում հայ ժողովուրդն ունեցել է 3 Նոր տարի Կաղանդ, Նավասարդ, Ամանոր (Նոր տարի):

Կաղանդը (լատ. galendae) – ամսամուտ, ամսավաճակ, նոր տարվա առաջին օրվա նշանակությունն է ունեցել: Նշվել է մարտի 21-ին գարնանային գիշերահավասարի



օրը, որը նաև բնության զարթոնքի խորհրդանշն էր:

Կաղանդ բառի լավագույն բացատրությունը տվել է Ա. Ծիրակացին. «Ջի նչ է կաղանդ և կաղանդիկոս: Կաղանդ տարեմուտ է և կաղանդիկոս նախասկզբնակ օր տարույն»: Տարվա հաջողությունն ու բերքատա լինելը հայերը կապել են գարնան զարթոնքի հետ (Արեգ ամսի Արեգ օր):

Մեր հեռավար ուսուցչուհին երեխաներին ներկայացրեց Նավասարդի տոնակատարությունները:

Նավասարդը (նավ – նոր, սարդ – տարի) նշվել է հայկական օրացույցի Նավասարդի 1-ին այն օրը, երբ հայոց հիմնադիր Հայկ Նահապետը հաղթեց Տիսուսյան Բելին (ի դեպ, երեխաները պատմության դասերից քաջատեղյակ էին մեր ավանդադիր նախնիի Հայկի պատմությանը): Ըստ ավանդության՝ Հայկ Նահապետը Հայոց Չոր գավառում օգոստոսի 11-ին սպանեց Բելին և ազատություն շնորհեց իր տոհմին: Այդ ժամանակից էլ հայերը Նոր տարին սկսել են տոնել օգոստոսի 11-ին: Նավասարդին նվիրված մեծ տոնակատարություններ են կատարվել ամենուրեք, գոհեր մատուցվել հեթանոսական աստվածներին, կազմակերպել են խրախճանքներ, թատերախաղեր, մրցումներ, ամենուրեք երգ ու պար էր, ձիաբազմեր, բաց էին թողնում հազարավոր աղավիհներ:

Տոնակատարություններին մասնակցում էին զինվորականներ, թագավորն իր շքախմբով: Նավասարդի տոնի առթիվ հավաքված մարդիկ իրենց հետ բերում էին նաև տարվա պտուղների առաջին բերքը:

Նոր տարին, Ամանորը կամ Կաղանդը հայոց տոնածիսական ամենախիբլված ու սպասված տոնն է առ այսօր:

Երեխաները մեծ սիրով ու ոգևորությամբ էին պատրաստվել դասին: Հետաքրքիր տեղեկություններ լսելուց հետո նրանք փորձեցին իրենց գիտելիքներով լրացնել դասը:

*Երևե՛կ թե այս Նոր տարին
Վերջ տար հայի ցավերին
Չարը կորչեր, ու բարին
Բույն դներ մեր սրտերին:*

Ռ. Պատկանյան



Սիրված երգի մեղեդին բոլորիս պարուրեց ջերմությամբ ու մեզ տեղափոխեց հին Հայաստան, որտեղ տոնի հետ կապված ավանդույթներն ունեին իրենց յուրահատուկ նշանակությունը:

Տոնը խորհրդանշող ծառը ոչ թե ավանդական կանաչ եղևնին էր, այլ բնական ճյուղերից պատրաստված խորհրդանշական ծառը (ծիրանենի, ձիթենի, խնկի ծառ): Ծառը զարդարում էին կանաչ ու կարմիր ժապավեններով, մրգերով, չրերով, քաղցրավենիքի տեսակներով, գույնզգույն թելերով:

րաստված քորթով: Նա ոչ թե նվերներ, այլ Ամանորի յոթ խորհուրդ է տվել: Երեխաները հերթով կարդացին և փորձեցին մեկնաբանել Կաղանդ պապի խորհուրդները բարություն, ազնվություն, քնկերասիրություն, աշխատասիրություն, համեստություն, գոհունակություն, հարգալից վերաբերմունք: Մրանք այն բոլոր հատկանիշներն են, որոնք բնութագրում են իսկական հային:

Հազարամյակների ընթացքում սիրված ու սպասված տոնը նշելու ժամանակը փոխվել է: Մտեղծվել են երկու տոմարներ: Դրանցից մեկը կոչվում էր ձին կամ Հուլյան, մյուսը՝ Նոր կամ Գրիգորյան:

Հունվարի 1-ը որպես տարվա սկիզբ, սահմանվել է Հռոմի կայսր Հուլիոս Կեսարի կողմից: Հին Հռոմում այդ օրը նվիրված էր Յանուսին՝ ընտրության, դոնեթի և բոլոր սկիզբների աստծուն, որը պատկերվում էր երկու երեսով, որոնցից մեկը նայում էր առաջ, մյուսը՝ ետ: Նոր տոմարը մտցվել է Հռոմի պապ Գրիգոր 13-րդի կողմից, Հուլյան օրացույցի փոխարեն (Գրիգորյան օրացույց): Այդ 2 տոմարների միջև եղած տարբերությունը կազմում է 13 օր: Հենց հունվարի մեկն էլ դրվեց մեր ներկա օրացույցի հիմքում:



Կարմիրը խորհրդանշում էր արևը, իսկ կանաչը բնությունը: Բոլոր զարդերը կտր էին կամ ձվաձև, որոնք խորհրդանշում էին կյանքը, հավերժությունը, միասնությունը: Ամեն ինչ վառ էր ու գեղեցիկ:

Երեխաները մեր պատրաստած կենսաց ծառից կախեցին իրենց հետ բերած քաղցրավենիքները, պահելով երազանք: Այնքան ու զվարթություն և սպասելիք կար նրանց այքերում կապված տոնի խորհրդի հետ:

*Հայեր երբեք չերկմտեք
Կատարվի այս ամեն,
Եթե իսպառ մենք հանենք
Փոքրոգություն մեր սրտեն...*

Ռ. Պատկանյան

Ակտիվ ծնողների նախաձեռնությամբ վեր հանեցինք ևս մի գեղեցիկ ավանդույթ՝ կապված տոնի հետ:

Ըստ հայկական հին ավանդության՝ Ամանորի գիշերը բոլորի տներում թխվում էր տարեկան-գաթա, որը հավասարապես բաժանվում էր տան անդամներին: Առանձին կտոր պահվում էր եկող հյուրի և դրսում գտնվողի համար: Տարեկանից մեջ դրվում էր չամիչ, չիր, բնկույզ, լոբի, ավելի ուշ՝ մետաղադրամ: Դա համարվում էր տարվա ղովաթ, խամաթ (հաջողություն): Ում բաժին էր ընկնում դովաթը, նա էլ համարվում էր տարվա հաջողակը:

Երեխաները մեծ հետաքրքրությամբ իրենց տարեկանի կտորների մեջ սկսեցին փնտրել խորհրդանիշ-հաջողություններ: Հայկական հյուրասիրության համաձայն մեր հեռավար ուսուցչուհուն էլ բաժին հանեցինք կարմրաթուշ գաթայից, (ով, ի դեպ, միջոցառման ողջ ընթացքում մեզ հետևում էր Էկրանի այն կողմից): Ոգևորությունը մեծ էր, իսկ տարվա հաջողակ դարձան Ռաֆիկն ու Թադևոս պապիկը (ով, ի դեպ, մեր ամենապարտաճանաչ հաճախողներից մեկն է):

Հին հայկական ավանդությամբ Ամանորի խորհրդանիշը ոչ թե Ձմեռ պապն էր, այլ Կաղանդ պապը, ով հայտնվում էր գավազանով և ոչխարի մորթուց պատ-

Որքան էլ տարիների ընթացքում փոխվեն սովորությունները, տոնը մնում է սպասված ու ցանկալի: Ամանորը ընտանեկան, խաղաղության, մաքրագործվելու, լավ ու բարին արարելու տոն է: Նոր տարվա հետ կապում ենք մեր բոլոր սպասումները մեր երջանկություն, առողջություն, առատություն, ապահովություն, պաշտպանվածություն, միասնություն, ուժ, համախմբում:

Ուրեմն թո՛ղ իրականանան բոլորիս երազանքները, թո՛ղ համերաշխությունն ու բարին թևածի ամենուր, մտնի տնետուն ու

*... Թե աշխարհում փակ դռներ կան,
Թող որ բացվեն այս գիշեր,
Ու Նոր տարին նոր խնդրությամբ
Թող ներս մտնի այս գիշեր,
Թե կան դատարի, համր տներ՝
մանկան ճիշով թող լցվեն,
Ով փնտրում է սրտանց մեկին՝
հանկարծ գտնի այս գիշեր:
Թե կան լացող, տխուր աչքեր,
Թող ծիծաղեն այս գիշեր,
Կանչող ձեռքերն իրար հասնեն,
հրաշք ապրեն այս գիշեր:*

Մետաքսե

ՇՆՈՐՀԱԳՈՐ ԱՄՍԵՐԸ ԵՎ ՍՈՒՐԸ ՏՆՈՒՆԸ:

Տովինար ՄԱՐԳՍՅԱՆ, հայոց պատմության ուսուցչուհի